ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 37 - Ա

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 211,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Սոցիալ-հոգեբանական և տնտեսական աջակցություն» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ասողիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2023 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված՝ N 447742 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն

ընկած ժամանակահատվածում գովազդային ապրանքների տպագրական ծառայությունների մատուցման գործարքը՝ 8,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էվրի դեյ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2022 թվականի հունիսի 24-ին կնքված՝ N RFQ-4906 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում խմելու ջրի և մեկանգամյա պլաստիկ բաժակների մատակարարման գործարքը՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված՝ N 0005/26/08/2024 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2022 թվականի հունվարի 26-ին կնքված՝ N 2616973 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում հետվճարային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ռայդթեք Էյ Էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Յանդեքս.Տաքսի Կորպ Էյէմ) հետ (ՀՎՀՀ՝ 02274309) 2021 թվականի հուլիսի 26-ին կնքված՝ N 20210078 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում տաքսի ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Երևան» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2021 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման գործարքը՝ 8,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Երևանի ԳԳՄ-ի (Հայոռուսգազարդ) հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 016.08.13.2539 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարման գործարքը՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ N 5-14-34 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություն-ների մատուցման գործարքը՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատա-կարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

04.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ